ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին կից խորհրդակցական աշխատանքային խմբի անդրանիկ նիստի

ք. Երևան 02.04.2026թ.

Նիստը վարում էր՝

Տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյան

Մասնակցում էին (խորհրդակցական աշխատանքային խմբի անդամներ)՝

Արմեն Ենգոյան	«Հայաստանի Երկրաբանների միություն» ՀԿ քարտուղար
Հովհաննես Եզակյան	«ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ծրագրերի ղեկավար
Արմեն Բակունց	«Աուրում Միներալս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական տնօրեն
Կարեն Մանվելյան	Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչ
Քրիստինե Սահակյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի շրջակա միջավայրի կառավարման, տուրիզմի և սերվիսի ամբիոնի վարիչ
Վարդան Ջհանյան	Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիայի նախագահ
Հրանտ Դավոյան	«Հրանտի Արկ» հիմնադրամի տնօրեն
Սուսաննա Ամիրխանյան	«Լաթե» բնապահպանական հասարակական կազմակերպության հիմնադիր
Տարոն Հովհաննիսյան	«ՏՆՏ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ագրոբիզնեսի մենեջեր
Սարգիս Հարությունյան	քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ
Աշոտ Ասլանյան	«Երևանի կենդաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գիտական գծով փոխտնօրեն, Երևանի պետական համալսարանի

	կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի դոցենտ
Հարություն Թամազյան	«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր ինժեներ
Լուսինե Մանուչարյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության ավագ խորհրդական (***առցանց***)
Կարինե Բաղդասարյան	քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ (***առցանց***)
Նորա Այվազյան	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանիի շրջակա միջավայրի և կայուն զարգացման ամբիոնի ավագ դասախոս
Նարինե Խալաթյան	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի շրջակա միջավայրի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ

Բացակայում էին՝

Վահե Մարտիրոսյան	«Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության գործառնական տնօրեն
Մարինե Ոսկանյան	ECE Caucasus Projects, շրջակա միջավայրի ազդեցության գնահատման փորձագետ
Վահան Հարությունյան	«Հայաստանի շինարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Վահան Կոբելյան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ջրային համակարգերի, հիդրոտեխնիկայի և հիդրոէներգետիկայի ամբիոնի վարիչ

Մասնակցում էին նաև՝

Վահան Գրիգորյան	Տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության պետ
Նաիրա Աղաբաբյան	Տեսչական մարմնի իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ

Խորհրդակցական աշխատանքային խմբի նիստին բացակա անդամները նախապես տեղեկացրել են հարգելի պատճառներով իրենց մասնակցությունն ապահովել չկարողանալու մասին:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարին կից խորհրդակցական աշխատանքային խմբի աշխատակարգը:

Կայացել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, բնապահպանական և ընդերքօգտագործման պետական վերահսկողության համակարգի կատարելագործման, ինչպես նաև պետություն–մասնավոր հատված համագործակցության և հանրային մասնակցության ապահովման նպատակով ձևավորված տեսչական մարմնի ղեկավարին կից խորհրդակցական աշխատանքային խմբի անդրանիկ նիստը:

Տեսչական մարմնի ղեկավար Հ.Մարտիրոսյանը ողջունելով ներկաներին, շնորհակալություն հայտնեց խմբի կազմում ընդգրկվելու պատրաստակամության համար՝ ընդգծելով, որ շրջակա միջավայրի պահպանությունն ու ընդերքի ողջամիտ օգտագործումը պահանջում է ինչպես խիստ վերահսկողություն, այնպես էլ բաց երկխոսություն քաղաքացիական հասարակության հետ՝ առկա մարտահրավերներին առավել արագ ու թափանցիկ լուծումներ տալու համար:

Աշխատանքային խմբի անդամները ներկայացրեցին իրենց գործունեության ոլորտը և կարևորեցին խորհրդակցական աշխատանքային խումբն ստեղծելու նախաձեռնությունը և հետագա համագործակցությունը:

Միաձայն հաստատվեց օրակարգում ընդգրկված խորհրդակցական խմբի աշխատակարգը, քննարկվեցին ոլորտում առկա համակարգային լուծումներ պահանջող առաջնահերթությունները:

Տեսչական մարմնի ղեկավարը ներկայացրեց իր դիտարկումները 2026 թվականի համար բնապահպանության ոլորտում առաջնահերթությունների մասով, մասնավորապես՝

- Հայաստանում կայանալիք COP17 համաժողովի շրջանակում Տեսչական մարմնի ստանձնած հանձնառությունների և վերահսկողական մեխանիզմների վերաբերությամբ, որոնք կապահովեն միջազգային բնապահպանական չափանիշների կիրառումը տեղական մակարդակում. կիսաազատ կամ անազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների վերցման և համապատասխան կեցավայրերում տեղավորման խնդիրների լուծում.

- հանրապետության տարածքում գործող օրինական և ոչ օրինական աղբավայրերի, իրականացվող վտանգավոր թափոնների գործածության՝ հավաքման, փոխադրման, պահման, տեղադրման գործունեության ընթացքում թույլ տրված խախտումների վերահսկման խնդիրների լուծում, կարևորելով նաև այն տեսակետը, որ թափոնների

գործածության վերահսկման ոլորտում լավագույն լուծումը աղբի ձևավորման փուլից դրա տեսակավորումն է:

-մթնոլորտային օդի պահպանության խնդիրների լուծում.

-ընդերքօգտագործման ոլորտում խնդիրների լուծում.

-ջրային ռեսուրսների պահպանության ոլորտում խնդիրների լուծում.

-էկոկրթական ոլորտում իրազեկման աշխատանքների կազմակերպում.

-ոլորտի թվայնացման օրակարգը, որը ենթադրում է ազգային գեոպորտալում GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ) համակարգի ներդրման և գործարկման գործընթաց, որի միջոցով հնարավոր կլինի տարածական տվյալների հավաքագրման, համակարգման, վերլուծության և փոխանակման միասնական միջավայր ձևավորել և ապահովել տարածական տվյալների միասնական կառավարում՝ բարձրացնելով վերահսկողական ու վերլուծական գործառույթների արդյունավետությունը, այսինքն՝ խնդիրն առաջանալու պահից դրա կարգավորումը:

Քննարկումների արդյունքում առաջարկվեց ներկայացնել առաջարկություններ, կարծիքներ թափոնների վերամշակման և մթնոլորտային օդի պահպանության խնդիրների լուծման ուղղությամբ, և լիազոր մարմիններին կներկայացվեն առավել կենսունակ լուծումները, որոնք կապահովեն երկարաժամկետ կիրառելիություն առանց լրացուցիչ ռեսուրսային բեռի:

Վերոնշյալ խնդիրների լուծման և ոլորտային ռիսկերի նվազեցման նպատակով ստացվող առաջարկությունների հիման վրա ձևավորել հաջորդ քննարկման օրակարգը:

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական
մարմնի ղեկավար Հ.Մարտիրոսյան

Նիստն արձանագրեց՝ Ն.Կիրակոսյան